ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026թ. ապրիլի 22-ից 25-ը Ղրղզստանի Հանրապետություն /Բիշքեկ/ կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը,ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Ստեփան Մնացականյան, ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ղրղզստանի Հանրապետություն (Բիշքեկ և Իսիկ-Կուլի մարզ), 2026թ. ապրիլի 22-ից 25-ը

3. Հրավիրող կողմը՝

Ղրղզստանի Հանրապետության ազգային վիճակագրական կոմիտե

4. Գործուղման նպատակը՝

Մասնակցել Ղրղզստանի վիճակագրության 100-ամյակի հանդիսավոր տոնակատարությանը, «Վիճակագրական բիզնես գործընթացների մոդեռնիզացում. պաշտոնական վիճակագրության նոր էկոհամակարգի ձևավորում» խորագրով միջազգային ֆորումին և ԱՊՀ մասնակից պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 75-րդ նիստին:
Ֆորումը կազմակերպվել էր Ղրղզստանի Հանրապետության ազգային վիճակագրական կոմիտեի կողմից՝ ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի հետ համագործակցությամբ:
Ֆորումը և ԱՊՀ մասնակից պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 75-րդ նիստը նվիրված էին Ղրղզստանի Հանրապետության պետական վիճակագրության պատմության մեջ կարևոր մի իրադարձության՝ ազգային վիճակագրական ծառայության ստեղծման 100-ամյակին:
Ֆորումի նպատակն էր քննարկել պաշտոնական վիճակագրության մոդեռնիզացման, վիճակագրական բիզնես գործընթացների թվային վերափոխման և վիճակագրական կարողությունների ամրապնդման հետ կապված արդիական հարցեր՝ աճող մարտահրավերների և սպառողների կարիքները բավարարելու անհրաժեշտության լույսի ներքո:
Ֆորումը ծառայեց որպես կարևոր հարթակ լավագույն վիճակագրական փորձի փոխանակման, ինչպես նաև ԱՊՀ երկրների վիճակագրական ծառայությունների միջև հարաբերությունների հետագա զարգացման համար, հնարավորություն ընձեռեց կիսվել ազգային և միջազգային փորձով, ռազմավարություններով և մոտեցումներով՝ տվյալների կառավարման և ամուր տվյալների էկոհամակարգ

կառուցելու գործում, ինչպես նաև՝ կարծիքներ փոխանակել քննարկումների ընթացքում:

5. Քննարկված թեմաները՝

Ֆորումին ներկայացվեցին և քննարկվեցին հետևյալ թեմաները.

1. Ժամանակակից ազգային վիճակագրական համակարգեր. գործընթացային մոտեցում և վիճակագրական արտադրության մոդեռնիզացում,
2. Տվյալների նոր աղբյուրների ինտեգրում. վարչական, այլընտրանքային և մեծ տվյալներ,
3. Թվային տեխնոլոգիաները և արհեստական բանականությունը՝ ի պատասխան վիճակագրական տվյալների աճող պահանջարկի,
4. Վիճակագրական կարողությունների զարգացում. մարդկային ռեսուրսներ, ինստիտուցիոնալ կայունություն և միջազգային համագործակցություն:

ԱՊՀ մասնակից պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 75-րդ նիստին, որը նախագահում էր Հայաստանը, ներկայացվեցին և քննարկվեցին հետևյալ հարցերը.

Հարց 1. Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 2025 թվականի գործունեության վերաբերյալ,

Հարց 2. Անկախ պետությունների համագործակցության միջպետական վիճակագրական կոմիտեի 2025 թվականի աշխատանքի վերաբերյալ,

Հարց 3. Անկախ պետությունների համագործակցության տնտեսական զարգացման ռազմավարության՝ մինչև 2030 թվականը վիճակագրության ոլորտում երկրորդ փուլի (2026–2030) իրականացման գործողությունների ծրագրի վերաբերյալ,

Հարց 4. Համագործակցության մասնակից պետությունների մշտական լիազոր ներկայացուցիչների խորհրդի նիստում Համագործակցության կանոնադրական և այլ մարմիններում «ԱՊՀ վիճակագրության զարգացում» նախագծի 2023-2025 թվականների իրականացման առաջընթացի վերաբերյալ:

Այլ հարցեր՝

- Ազգային վիճակագրական ծառայություններից տվյալների հավաքագրման բարելավման վերաբերյալ՝ աշխատանքային ինտենսիվությունը նվազեցնելու նպատակով,
- ԱՊՀ մասնակից պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 76-րդ նիստի վերաբերյալ,
- ԱՊՀ մասնակից պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 75-րդ նիստի կոմյունիկեի մասին:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հայաստանը ֆորումին ներկայացրեց «Ստանդարտները և մոդեռնիզացման մոդելներն Արմստատում» խորագրով շնորհանդես:
Ֆորումին քննարկվեցին պաշտոնական վիճակագրության մոդեռնիզացման հետ կապված արդիական հարցերը, ներկայացվեցին արհեստական բանականության կիրառման մարտահրավերները և հնարավորությունները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման գլխավոր ուղերձն էր՝ շարունակել համագործակցությունն՝ ուղղված պաշտոնական վիճակագրության մոդեռնիզացմանը, վիճակագրական բիզնես գործընթացների թվային փոխակերպմանը և վիճակագրական կարողությունների ամրապնդմանը:
Կարևորվեց նաև տվյալների այլընտրանքային աղբյուրների ներուժի օգտագործումը պաշտոնական վիճակագրության մեջ, տվյալների նոր աղբյուրների ինտեգրումը, մասնավորապես վարչական, մեծ տվյալների, աշխարհատարածական տեղեկատվության:
Հատուկ ուշադրություն դարձվեց մարդկային ռեսուրսների և ինստիտուցիոնալ կայունության խնդիրներին, ինչպես նաև՝ միջազգային վիճակագրական համագործակցության զարգացմանը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Մասնակցությունը ֆորումին և ԱՊՀ մասնակից պետությունների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 75-րդ նիստին հնարավորություն ընձեռեց ազգային վիճակագրական ծառայությունների ներկայացուցիչներին՝ ծանոթանալու վերջին զարգացումներին ԱՊՀ տարածաշրջանում, կիսվելու լավագույն փորձով, ինչպես նաև՝ քննարկելու վիճակագրության առջև ծառացած մարտահրավերները, համագործակցության ուղիները և գործողություններն՝ ուղղված ազգային վիճակագրական համակարգերի հետագա զարգացմանը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ստեփան Մնացականյան

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը - ՀՀ վիճակագրական կոմիտե

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը - Հայաստանի Հանրապետության Վարչապետի 09.04.26թ. թիվ N 300 – Ա որոշում

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

Ստեփան Մնացականյան – Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի նախագահ

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

1. Գործուղման վայրը – Ղրղզստանի Հանրապետություն (Բիշքեկ և Իսիկ-Կուլի մարզ)

2. Գործուղման ժամկետները՝ 2026թ. ապրիլի 22-ից 25-ը

3. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը - ԱՊՀ Միջպետական Վիճակագրական Կոմիտե

(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

ճանապարհածախս, գիշերավարձ

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը	Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն	Ընդամենը (հազ. դրամ)

		1	2	3	...	
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)					
	Ավիատոմսի արժեքը (դրամ)					
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					
	Ընդամենը (դրամ)					
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար					
	Մուտքի արտոնագրի վճար					
	Այլ ծախսեր (նկարագրել)					
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)						

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը

Գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյան

27.04.26թ.